Արձանագրություն N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Տեսանկարահանման և հեռարձակման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված « ԴԴ-ՇՀԾՁԲ-15/4-01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «04» մարտի 2016թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արման Խաչատրյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի արարողակարգի և հասարակայնության հետ կապերի վարչության պետ:

հանձնաժողովի անդամներ՝

Արմեն Ասլանյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Անահիտ Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Աղավնի Բուդուլյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/4-01» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի մարտի 04-ին, ժամը 11:00-ին:

2. Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր /նախահաշվային/ գնի վերաբերյալ.

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի/այսուհետև՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	Գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	Տեսանկարահանման և հեռարձակման ծառայություններ	4 508 500

2.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը, հեռախոսահամարը
1	«ԱՐՏԻՍ» ՍՊԸ	ք. Երևան, Կոմիտաս 56 շ., բն. 90, Հեռ. (077) 216556
2	«Բանաձև» ՍՊԸ	ք. Երևան, Ավանեսովի 8. բն 26, Հեռ. (077)212055

2.3 Համակարգում 24.02.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

3.1 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1.1 «ԱՐՏԻՍ» ՍՊԸ -ի և «Բանաձև» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3.2 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի/՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

3.2.1 «ԱՐՏԻՍ» ՍՊԸ -ի և «Բանաձև» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտերում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գներն են՝

ՀՀդրամ

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«ԱՐՏԻՍ» ՍՊԸ			«Բանաձև» ՍՊԸ		
		Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/
1	Տեսանկարահանման և հեռարձակման ծառայություններ	4 500 000	-	4 500 000	9 900 000	-	9 900 000

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ հանձնաժողովը որոշեց.

5.1. 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՏԻՍ» ՍՊԸ -ին:

«Բանաձև» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է սույն գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի քարտուղարին.

6.1 Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան հարցումը:

6.2 Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի

մարտի 12-ը ներառյալ, ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովի նիստ հրավիրել 2016 թվականի մարտի 15-ին, ժամը՝ 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արման Խաչատրյան

Անդամներ՝ _____ Արմեն Ասլանյան

_____ Կարեն Մելքոնյան

_____ Անահիտ Ավագյան

_____ Աղավնի Բուդուլյան

Քարտուղար՝ _____ Մարիամ Հայրապետյան